Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²⁹:

9.7 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները³⁰:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 2471201669930000
ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրեն՝

Ա. Վանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

²⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

³⁰ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ***ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Զ/հ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական բնութագիր	Զ/մ
1	Քարշիչ պահարան վազարանային սենյակի համար	Քարշիչ պահարան ապակեղենի լվացման համար: Երկարությունը, մմ: 1500 Խորությունը, մմ: 850 Բարձրությունը, մմ: 2230 Աշխատանքային բոքսը. Աշխատանքային մակերեսը – Polystone Երկու գավաթ VITE էպոքսիդային միացությունից 450*365*280մմ (պոլիպրոպիլենային սիֆոններ ծալքավոր ճկուն խողովակներ հավաքածուի մեջ) Մեկ լաբորատոր խառնիչ-ծորակ շտուգերով (երկու ճկուն միացումներ 1200մմ երկարությամբ հավաքածուի մեջ) Աշխատանքային տարածքի չափսերը – 1470*600*1200մմ Ուղղորդող շրջանակը – ալյումինե պրոֆիլ, ներկված փոշի ներկով (RAL 7035/RAL 5023) Առաջնային կցապոռնիկը թթվակայուն ողորկ չժանգոտվող պողպատ ASSI316, կողմանյին վահանակները-թրծված ապակի, երկու փոխկապակցված բարձրացող էկրաններ-թրծված ապակի ալյումինե շրջանակների մեջ, էկրանների բարձրացումը 0-78մմ, չեն փոխում պահարանի չափերը բարձրացման ժամանակ; Վերին անշարժ էկրանը –մետաղային խցիկ է ներկված փոշե ներկով(RAL 7035); Հետին և վերին վահանակները – պոլիպրոպիլեն, վերին վահանակի վրա լյումինեսցենտ փոշիաջրապաշտպանված լուսակիր (IP65 1x36Bt); Եզրը d=250մմ (հետին վահանակից մինչև եզրի կենտրոնի հեռավորությունը – 160մմ) օդի քարշի երեք մակարդակ , հակակշիռները տեղադրված առաջնային մասում և հեշտությամբ սպասարկվում են Շրջանակային հիմքը մետաղական տումբա՝ ներկված փոշե ներկով(RAL 7035) շագրենե կաշվի ֆակտուրայով, երկու փեղկավոր դռներ – TRESPA Athlon 4 մմ հաստությամբ; մեկ աշխատանքայի տարածք առանց միջնորմների, կոճակային անջատիչ; էլեկտրամոնտաժային տուփը (IP65) տեղադրված է հետին մասում,կառավարվող հենքեր:	հատ
2	Քարշիչ պահարաններ օրգանական լուծիչներով աշխատանքի համար	Քարշիչ պահարան օրգանականլուծիչների հետ աշխատանքի համար: Երկարությունը, մմ: 1500 Խորությունը, մմ: 850 Բարձրությունը, մմ: 2230 Աշխատանքային բոքսը. Աշխատանքային մակերեսը – արհեստականկվարցե քար /Իտալիա/ հաստությունը 20 մմ և 7 մմ հաստության պոռնեգով: Քարշիչ պահարանի վերին հատվածում տեղադրված է պաշտպանիչ էկրան մետաղական շրջանակով պարունակում է՝ Տրիպլեքս՝ անվտանգ ապակի Մեկ լաբորատոր խառնիչ-ծորակ շտուգերով (երկու ճկուն միացումներ 1200մմ երկարությամբ հավաքածուի մեջ) Աշխատանքային տարածքի չափսերը – 1414*574*1090 մմ Ուղղորդող շրջանակը – ալյումինե պրոֆիլ, ներկված փոշի ներկով (RAL 7035/RAL 5023) Առաջնային կցապոռնիկը թթվակայուն ողորկ չժանգոտվող պողպատ ASSI316, կողմանյին վահանակները-թրծված ապակի, երկու փոխկապակցված բարձրացող էկրաններ-թրծված ապակի ալյումինե շրջանակների մեջ, էկրանների բարձրացումը 0-78մմ, չեն փոխում պահարանի չափերը բարձրացման ժամանակ; Վերին անշարժ էկրանը –մետաղային խցիկ է ներկված փոշե ներկով(RAL 7035); Հետին և վերին վահանակները – պոլիպրոպիլեն, վերին վահանակի վրա լյումինեսցենտ փոշիաջրապաշտպանված լուսակիր (IP65 1x36Bt); Եզրը d=250մմ (հետին վահանակից մինչև եզրի կենտրոնի հեռավորությունը – 160մմ) օդի քարշի երեք մակարդակ , հակակշիռները տեղադրված առաջնային մասում և հեշտությամբ սպասարկվում են Շրջանակային հիմքը մետաղական տումբա՝ ներկված փոշե ներկով(RAL 7035) շագրենե կաշվի ֆակտուրայով, երկու փեղկավոր դռներ – TRESPA Athlon 4 մմ հաստությամբ; մեկ աշխատանքայի տարածք առանց միջնորմների, կոճակային անջատիչ; էլեկտրամոնտաժային տուփը (IP65) տեղադրված է հետին մասում,կառավարվող հենքեր:	հատ
3	Քարշիչ պահարաններ հետազոտական և նմուշապատրաստման/հա	Քարշիչ պահարանները նախատեսված են մարդու համար քիմիապես ցտանգովոր նյութերով հետազոտական աշխատանքների իրականացման համար, որի ընթացքում անհրաժեշտ է աշխատանքային գոտուց քիմիական նյութերի արդյունավետ հեռացում	հատ

	նքայնացման սենյակների համար	օդափոխության օգնությամբ: Օդաքարշիչ համակարգը իրականացված է չժանգոտվող պողպատով: Կառավարման բոլոր տարրերը տեղակայված են առաջնային վահանակի վրա, բացառելով օպերատորի հնարավոր շփումը վտանգավոր միջավայրի հետ: Առաջնային ապակու բարձրացում/իջեցումը իրականացվում են էլեկտրական իմպուլսի միջոցով: Օդի քարշը իրականացվում է երեք մակարդակներից՝ վերին, միջին և ներքին մակարդակներից, պահարանի հետին պատի ցանցերի միջոցով: Աշխատանքային մակերեսը իրականացված է քիմիապես կայուն FRIDURIT կամ DURCON նյութերից: Քարշիչ պահարանի ընդհանուր չափերը(բարձրացրած ապակու պայմաններում)(LxHx P) մմ 1805x 810x 2545 Քարշիչ պահարանի ընդհանուր չափերը(իջեցրած ապակու պայմաններում)(LxHx P) մմ 1805 x 810 x 2335 Աշխատանքային խցիկի չափերը (LxHx P) մմ- 1710 x 720 x 820 Պահարանի ընդհանուր քաշը, կգ 470 Պահարանի կողմից օգտագործվող էլեկտրական հզորությունը(առանց ներկառուցված վարդակների ծանրաբեռնվածության հաշվարկի) Վտ- 360 Առավելագույն թույլատրելի ընդհանուր ծանրաբեռնվածությունը վարդակների համակարգի վրա, ոչ ավել – Վտ- 6000 Աշխատանքային գոտու լուսավորությունը, ոչ պակաս , Lp- 500 Պահարանը պետք է ունենա վակուում ծորակ, երկու մակարդակների տեղաշարժվող ապակիներով կողային վահանակ, ջրահեռացման լվացարան DURCON նյութից, լատունից պատրաստված ջրի ծորակ, տաք/սառը ջրի խառնիչ-ծորակ, հանվող դարակ կառավարվող օդի քարշ երեք մակարդակներից, Քարշիչ պահարանի ներքևի մասի դարակները ներկայացվում են բացվող դռներով, անիվներով, տեղաշարժվող պահարանիկի տարբերակով:	
4	Քարշիչ պահարան մուֆելային վառարանների համար	Քարշիչ պահարանները պատրաստված են չժանգոտվող պողպատից, ծածկված են քիմիապես կայուն փոշե ներկով: Պահարանը նախատեսված է մուֆելային վառարանների տեղադրման և շահագործման համար: Քարշիչ խցիկը պատրաստված է լամինացված նյութից, աշխատանքային մակերեսը, կողային և հետին մակերեսները երեսապատված են կերամագրանիտային սալիկներով : Օդի քարշը միայն աշխատանքային խցիկի վերևի մասից: Պահարանի ներքևի մասը հավաքական մետաղական կարկաս է, որի հենարանները ունեն հատակի անհարթությունները հավասարակշռելու 0-30 մմ միջակայքի հնարավորություն:	հատ
5	Պահարան գազերի բալոնների համար	Պահարան սեղմված գազերի 50լ չորս բալոնների համար: Արտաքին չափերը՝ 1300x 600 x 2015 մմ, ներքին չափերը՝ 1165 x500 x 1830մմ, քաշը՝ 460կգ: Գազի բալոնների պահարանը համապատասխանում է EN 14470-2, EN 14727 պահանջներին: Այրվելու նկատմամբ փորձարկումները իրականացվել են EN 1363-1: 1999 ստանդարտների համաձայն հավատարմագրված լաբորատորիաներում: Պահարանները պատրաստված են հատուկ մշակված 10/10 հաստության պողպատից, ներկված է քիմիապես կայուն փոշե էպոքսիդային ներկով և անցել է 200°C թերմիկ մշակում: Արտաքին մոնոլիտ կոնստրուկցիա, լրիվ եռակցված: Նոր տեխնոլոգիական երկշերտ կոնստրուկցիա, կազմված երկու տարբեր կորպուսներից՝ ներքին և արտաքին: Հրդեհակայուն մեկուսացում, որը իրականացված է էկոլոգիապես անվտանգ և բարձր հրդեհակայուն հատկություններով նյութերի օգնությամբ: Ներքին չուժեղացված օդափոխության համակարգով գոլորշիների համար, երկու ապահովիչ պականներով, որոնք կապահովեն համակարգի անջատումը միջակայքի 70±10°C ջերմաստիճանի դեպքում, գտնվում են պահարանի ներքևում և վերևում, ապահովում է պահարանի գազերի և գոլորշիների արտամղումը: Օդի արտամղման համակարգի/խողովակի հնարավորություն 100 մմ տրամագծով: Հնարավորություն ռեդուկտորների տեղադրման համար: Չորս ամրակապիչներ բալոնների ամրացման համար: Գազի արտահոսքի վերահսկման համակարգի հնարավորություն: Ապահովիչ գլանային փական, որը փակվում է բանալիով: Արտաքին մակնշումների հնարավորություն/զգուշացում պահարանում պահվող գազերի բալոնների մասին: Հողանցումների հնարավորություն ստատիկ էլեկտրական հոսանքի առաջացման դեպքում: Կառավարվող ոտքերի հնարավորություն, պահարանի հավասարակշռման համար: Շահագործման և տեխնիկական սպասարկման ձեռնարկ:	հատ
6	Համակցված պահարան դյուրավառ քիմիական նյութերի/հեղուկների և ագրեսիվ քիմիական նյութերի (խիտ անօրգանական թթուներ, հիմքեր) պահպանման համար	Համակցված Պահարան դյուրավառ նյութերի/հեղուկների, ռեակտիվների, թթուների, հիմքերի անվտանգ պահպանման համար(labor Seurity System) KEMFIRE 1100 A TYPE A: Արտաքին չափերը՝ 1100 x510 x1700 մմ, քիմական նյութերի, թթուների, հիմքերի պահպանման բաժնի ներքին չափերը՝ 490+490 x465 x1010 մմ, դյուրավառ հեղուկների բաժնի ներքին չափերը՝ 935 x395 x445 մմ, քաշը՝ 300կգ: Հրդեհակայունությունը՝ 90 րոպե: Համապատասխանում է EN14470-1, EN 61010-1, EN 14727 պահանջներին: Պահարանները պատրաստված են հատուկ մշակված 10/10 հաստության պողպատից, ներկված է քիմիապես կայուն փոշե էպոքսիդային ներկով և անցել է 200°C թերմիկ մշակում: Արտաքին մոնոլիտ կոնստրուկցիա, լրիվ եռակցված: Նոր տեխնոլոգիական երկշերտ	հատ

		կոնստրուկցիա, կազմված երկու տարբեր կորպուսներից՝ ներքին և արտաքին: Հրդեհակայուն մեկուսացում, որը իրականացված է էկոլոգիապես անվտանգ և բարձր հրդեհակայուն հատկություններով նյութերի օգնությամբ: ապահովում է պահարանի գազերի և գոլորշիների արտամղումը: Օդի արտամղման համակարգի/խողովակի հնարավորություն 100 մմ տրամագծով: ազի արտահոսքի վերահսկման համակարգի հնարավորություն: Ապահովիչ գլանային փական, որը փակվում է բանալիով: Հողանցումների հնարավորություն ստատիկ էլեկտրական հոսանքի առաջացման դեպքում: Կառավարվող ոտքերի հնարավորություն, պահարանի հավասարակշռման համար: Շահագործման և տեխնիկական սպասարկման ձեռնարկ: - Քիմիական նյութերի,թթուների և հիմքերի բաժանմունք. Ըստ բարձրության կառավարվող եկու դարակներ և ներքին սկուտեղ: Կորպուսը(էլեկտրացինկապատ պողպատ)ներկված է քիմիապես կայուն փոշե էպոքսիդային ներկով: Դարակի ծավալը 7լիտր, քաշի կարողությունը/դիմացկունությունը 40/100 կգ: Ներքին սկուտեղի հավաքման ծավալը 13լիտր: Դռները բացվում են 110°: Ժանգակայուն միացումներ/հանգույցներ: Ապահրատորի հնարավորություն: Հատիկավոր ածուխով ֆիլտրերի հնարավորությամբ, որը տեղադրվում է պահարանի ներսում և հեշտությամբ փոխվում է: Ասպիրատորի հնարավորությամբ: Լամպ, որը նախագգուշացնում է օդափոխիչ-քարշիչ համակարգի միացման մասին: Սնուցումը 220/230V, Հզորությունը՝ 21 Վտ: Ներքին հարկաբաժինը , որը նախատեսված է դյուրավառ նյութերի/հեղուկների համար: Պահարանները պատրաստված են հատուկ մշակված 10/10 հաստության պողպատից, ներկված է քիմիապես կայուն փոշե էպոքսիդային ներկով և անցել է 200°C թերմիկ մշակում: Արտաքին մոնոլիտ կոնստրուկցիա,լրիվ եռակցված: Նոր տեխնոլոգիական երկշերտ կոնստրուկցիա, կազմված երկու տարբեր կորպուսներից՝ ներքին և արտաքին: Հրդեհակայուն մեկուսացում, որը իրականացված է էկոլոգիապես անվտանգ և բարձր հրդեհակայուն հատկություններով նյութերի օգնությամբ: Թերմոընդարձակվող մեկուսացում 6+8 սմ, որը հրդեհի ժամանակ պահարանի ներքին ծավալը լրիվ մեկուսացնում է արտաքինից: Դռների ավտոմատ փակվելու հնարավորություն ամեն անգամ բացվելուց հետո: Ըստ բարձրության կառավարվող եկու դարակներ և ներքին սկուտեղ: Կորպուսը(էլեկտրացինկապատ պողպատ) ներկված է քիմիապես կայուն փոշե էպոքսիդային ներկով: Դարակի ծավալը 7լիտր, քաշի կարողությունը/դիմացկունությունը 80 կգ: Ներքին սկուտեղի հավաքման ծավալը 9 լիտր: Ներքին չուժեղացված օդափոխության համակարգով գոլորշիների համար, երկու ապահովիչ պականներով,որոնք կապահովեն համակարգի անջատումը միջակայքի 70±10°C ջերմաստիճանի դեպքում, գտնվում են պահարանի ներքևում և վերևում, ապահովում է պահարանի գազերի և գոլորշիների արտամղումը: Օդի արտամղման համակարգի/խողովակի հնարավորություն 100 մմ տրամագծով: Կայծաանվտանգ հանգույցներ, որոնք տեղադրված են դռների երկարությամբ: Քաշը՝ 300 կգ, ներքին ծավալը՝ 3000 լ:	
--	--	--	--

*Ապրանքը պետք է լինի չօգտագործված:

Ապրանքների տեղափոխումը,բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:

Պարտադիր պայման է հանդիսանում գնային առաջարկների հետ բոլոր ապրանքատեսակների նկարների կամ գծապատկերների՝ համապատասխան չափերով և գույներով ներկայացումը պատրաստանյութի և ծագման երկրի նշումով:

Կահույքի առաքումն ու տեղում հավաքումը իրականացվում է Վաճառողի կողմից:

Մասնակիցները կարող են ծանոթանալ տարածքի հատակագծին և տեղում կատարել չափագրումներ:

Այն չափաբաժիններում, որոնցում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է, կամ «համարժեք» արտահայտությունը:

Գնումների մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն փաստաթղթեր,որոնք հաստատում են վաճառքի առաջարկվող կահույքի որակը և համապատասխանությունը միջազգային ստանդարտներին, համապատասխանության սերտիֆիկատներ և սանիտարահիգիենիկ փորձաքննության եզրակացություններ, ԻՍՕ 9001-2008 միջազգային սերտիֆիկատ, որը կանոնակարգում է առաջարկվող կահույքի արտադրությունն ու մատակարարումը, կահույքի արտադրության մեջ կիրառվող

արտասահմանյան արտադրողների նյութերի և բաղադրամասերի լիազորագիր նամակներ:

Անհրաժեշտ է տրամադրել տեղեկություններ արտադրական պայմանների, երաշխիքային ժամկետների վերաբերյալ:

Երաշխիքային ժամկետը պետք է լինի ոչ պակաս քան 18 ամիս տեղադրման օրվանից: Պետք է ներկայացվի գնման առաջարկվող ապրանքների էսքիզները (գծագրեր, ֆոտոշարք):

Անհրաժեշտ է ներկայացնել բոլոր կիրառվող մակերեսների նմուշները:

Եթե աշխատանքային մակերեսները կառաջարկվի նմանատիպ նյութերից ապա անհրաժեշտ է՝

- Տրամադրել տեղեկություններ առաջարկվող այլընտրանքային նյութերի քիմիական կայունության վերաբերյալ՝ կապված անօրգանական թթուների, ալկալիների եվ այլ ազդեցիվ նյութերի հետ:

- Տրամադրել տեղեկություններ է այլընտրանքային նյութերի ֆիզիկական եւ մեխանիկական հատկությունների վերաբերյալ:

- Տրամադրել արտադրող ընկերության տեղեկատվություն այլընտրանքային մասերի վերաբերյալ (արտադրություն նյութական, քիմիական եւ ֆիզիկաքիմիական մեխանիկական հատկությունների մասին):

Եթե մասնակցի կողմից ներկայացվող գնման առարկայի (ներառյալ նյութերի և/կամ բաղադրամասերի) տեխնիկական բնութագիրը տարբերվում է տվյալ հավելվածում ներկայացված տեխնիկական բնութագրից, ապա անհրաժեշտ է տրամադրել նաև ներկայացվող համարժեք գնման առարկայի (ներառյալ նյութերի և/կամ բաղադրամասերի) տեխնիկական բնութագիրը:

Եթե մատակարարը չի հանդիսանում կահույքի արտադրողը, նա պարտավոր է ներկայացնել փաստաթուղթ, որը կհաստատի, որ մատակարարը հանդիսանում է արտադրողի ներկայացուցիչը և երաշխավորում է երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը: Որակի և երաշխիքի վերաբերյալ հավաստագրի առկայությունը պարտադիր է:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 2471201669930000
ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրեն՝

Ա. Վանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Զ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016թ.		Ընդամենը	
	Անվանումը	Զ/մ	Միավորի գինը	Մատակարարման ժամկետը պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.06.2016թ.			
				քանակը	գինը	քանա կը	գինը
1	2	3	4	5	6	7	8
1	Քարշիչ պահարան լվացարանային սենյակի համար	հատ		1		1	
2	Քարշիչ պահարաններ օրգանական լուծիչներով աշխատանքի համար	հատ		2		2	
3	Քարշիչ պահարաններ հետազոտական և նմուշապատրաստման/հանքայնացման սենյակների համար	հատ		2		2	
4	Քարշիչ պահարան մուֆելային վառարանների համար	հատ		1		1	
5	Պահարան գազերի բալոնների համար	հատ		1		1	
6	Համակցված պահարան դյուրավառ քիմիական նյութերի/հեղուկների և ազրեսիվ քիմիական նյութերի (խիտ անօրգանական թթուներ, հիմքեր) պահպանման համար	հատ		2		2	
Ընդամենը				9	X	9	X

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 2471201669930000
ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

 /ստորագրություն/
 Կ.Տ

**ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
 ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.' ըստ ամիսների՝ ընդ որում							
		հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Քարշիչ պահարան լվացարանային սենյակի համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
2	Քարշիչ պահարաններ օրգանական լուծիչներով աշխատանքի համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
3	Քարշիչ պահարաններ հետազոտական և նմուշապատրաստման/հանքայնացման սենյակների համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
4	Քարշիչ պահարան մոֆելային վառարանների համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
5	Պահարան գազերի բալոնների համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
6	Համակցված պահարան դյուրավառ քիմիական նյութերի/հեղուկների և ագրեսիվ քիմիական նյութերի (խիտ անօրգանական թթուներ, հիմքեր) պահպանման համար	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
 Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
 Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
 Հ/Հ 2471201669930000
 ՀՎՀՀ 02625503

 /ստորագրություն/
 Կ.Տ

Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան

 /ստորագրություն/
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման ժամկե տը /ըստ վճարմ ան ժաման ակացու յցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են
սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
-----ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ----- -ին կնքված N -----
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ----- -- -ին հանձնման-
ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

<<---ՇՀԱՊՁԲ---/--->> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՀԱՐՑՈՒՄ
ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

.....-ի կարիքների համար կազմակերպված
պատվիրատուի անվանումըգնման ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով կազմակերպման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20..... թվականի-ի N որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները՝

N	Մասնակցի		
	անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

Ինդիքում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների՝ նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

..... ծածկագրով գնահատող
հանձնաժողովի քարտուղար

ստորագրություն

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի
47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պատվիրա տուի անվանումը	Մասնակցի								
		անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ժամկետանց հարկային պարտավորություններ ի գումարի չափը/ՀՀ դրամ	հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ				հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավելշտային արժեքը/ՀՀ դրամ	
									ակտիվներ	պարտավորություն
					20..թ.	20..թ.	20..թ.	Ընդամե նը		

Եզրակացությունը տրվել է վարչության աշխատակից-ի կողմից

.....
պաշտոնյայի անունը, ազգանունը

.....
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

<<_____>> 20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Բժշկական սարքերի>> ձեռքբերման «ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՎԿԱԿ-2016-29» ծածկագրով ՇՀ գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետև՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետև՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽԱՍՑԵՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝

Ո՛նկերության անվանումը՝

Հասցեն՝

Սպասարկող բանկի անվանումը.

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ _____

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ³¹ N (պայմանագրի կատարման ապահովում)	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝	
9. Շահառուի ՀՎՀՀ՝	
10. Շահառուի բանկը՝	
11. Շահառուի հաշվի համարը /h2.N/	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝	
15. Պայմանագրի ծածկագիրը՝	
16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	
17. կից՝--- էջ	
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____ /_____ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____ /_____ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

³¹ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Հ/Հ	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը
1	2	3	4	5
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ	լրացվում է վճարողի կողմից

			իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	
8.	շահառու	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
9.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը)	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
11.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
13.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
14.	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
15.	պայմանագրի ծածկագիրը (համարը)	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	լրացվում է վճարողի կողմից
16.	փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝	լրացվում է շահառուի կողմից

			երաշխիքի դիմաց և այլն)	
17.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին	լրացվում է շահառուի կողմից
18.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:	ստորագրվում է վճարողի կողմից
18.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է վճարողի կողմից
19.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
19.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից
20.ա .	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր	
20.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում	
21.ա.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
21.բ.	վճարողին սպասարկող	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը	

	Ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կնիքը		թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
22.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) _____
 հանդիսանում է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար³²) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
 (անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
 (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
 (երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
 կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում
 ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
 _____ (այսուհետ՝
 (գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____
 (օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
 (բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է
 փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
 (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից
 ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված
 պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____
 (օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի
 պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող
 պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում
 երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից

³² Պեղծության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պեղծ է նշվի
 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)